



ՏԵՂԵԿԱՆՔ

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը ստորագրվել է 2016թ. դեկտեմբերի 26-ին Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Այն հանդիսանում է միջպետական պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները:

2015 թվականի հունվարի 2-ից Եվրասիական տնտեսական միությանը անդամակցած Հայաստանի Հանրապետությունը միացել է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրին (2010 թվականի նոյեմբերի 27-ի արձանագրության խմբագրությամբ), ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող թվով 28 այլ միջազգային պայմանագրերին:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից պայմանավորվածություն էր ձեռք բերել մշակել նոր մաքսային օրենսգիրք: «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը բաղկացած է վեց հոդվածից և ունի երեք հավելված.

- Հավելված 1. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը՝ բաղկացած 9 բաժնից, 465 հոդվածից և 2 հավելվածից,
- Հավելված 2. Ցանկ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի, որոնց գործողությունը դադարեցվում է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ,

- Հավելված 3. Ցանկ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի դրույթների, որոնք ուժը կորցրած են ճանաչվում են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ:

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու կապակցությամբ դադարեցվում են Պայմանագրի Հավելված 2-ում նշված Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող թվով 15 միջազգային պայմանագրերի գործողությունը, այդ թվում նաև «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի գործողությունը: Իսկ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 444-րդ և 448-րդ հոդվածների համաձայն ընդունված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան որոշումների ուժի մեջ մտնելու օրվանից իրենց գործողությունը կդադարեցնեն ևս 5 միջազգային պայմանագրեր:

Պայմանագիրը նախատեսում է կարգավորել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ երրորդ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման և նշված պետություններ ապրանքների արտահանման հետ կապված մաքսային գրեթե բոլոր իրավահարաբերությունները՝ բացառությամբ այն իրավահարաբերությունների, որոնք նույն Պայմանագրի համաձայն նախատեսվում է վերապահել ԵՏՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությանը: Պայմանագրում նաև տեղայնացվել են ներկայումս գործող առանձին մաքսային իրավահարաբերություններ կարգավորող միջազգային պայմանագրերի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների դրույթներ՝ դարձնելով այն մաքսային իրավահարաբերությունները կարգավորող հիմնական և համապարփակ միջազգային պայմանագիր:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ ԵՏՄ մաքսային օրենսգիրք) ընդունման հիմնական նպատակը Եվրասիական տնտեսական միությունում միասնական մաքսային կարգավորման ապահովումն է, մասնավորապես՝

- ԵՏՄ մաքսային օրենսգիրքը կառուցված է էլեկտրոնային հայտարարագրման սկզբունքի կիրառման վրա: ԵՏՄ մաքսային օրենսգրքի բոլոր դրույթները կիրառելի կլինեն և լիարժեքորեն կարող են գործել էլեկտրոնային հայտարարագրման համակարգին անցման դեպքում: Միաժամանակ կատարված են բացառություններ որոշ դեպքերի համար՝ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխում, մաքսային

տարանցման, միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների դեպքում և այլն:

- Նախատեսվում է կրճատել ապրանքների բացթողման ժամկետները: Մասնավորապես, ապրանքների բացթողումը կատարվելու է մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելուց 4 ժամվա ընթացքում՝ ներկայումս մաքսային հայտարարագրի գրանցումից հետո սահմանված 1 աշխատանքային օրվա փոխարեն:
- Վարչարարական գործընթացների պարզեցման նպատակով ներկայումս սահմանված 2+2 ամիս ժամանակավոր պահպանության ժամկետի փոխարեն ԵՏՄ մաքսային օրենսգրքով նախատեսվում է կիրառել միանգամից 4 ամիս ժամկետը՝ առանց երկարաձգման հնարավորության:
- Հստակեցվել են գործող մաքսային օրենսգրքով սահմանված մաքսային ընթացակարգերին վերաբերող կարգավորումները:
- Ազատ տնտեսական գոտիների շրջանակներում «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին առնչվող դրույթների գերակշիռ մասը նախատեսվում է ներառել (կարգավորել) ԵՏՄ մաքսային օրենսգրքով:
- Նախատեսվում է լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտն ամբողջությամբ համապատասխանեցնել 1999թ. Կիոտոյի վերանայված միջազգային կոնվենցիայի դրույթներին, ինչպես նաև Համաշխարհային առևտրի դյուրացման և անվտանգության շրջանակային ստանդարտներին,
- Հստակ տարանջատվել են մաքսային հսկողության ձևերը և մաքսային հսկողության ապահովման միջոցները, հստակեցվել են մաքսային հսկողության առանձին տեսակների իրականացման ժամկետները:

Ելնելով վերոգրյալից՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վավերացումը գտնում ենք նպատակահարմար:



Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ